ՀՀ ներքին գործերի նախարարության
ֆինանսաբյուջետային վարչության պետ
Վարդան Պետրոսյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փործագետ Հերմինե Եղիշեի Անտոնյանի կողմից 2024թվականի 4-րդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

2024թ. 4-րդ եռամսյնակի ընթացքում իմ կողմից ՀՀ Շիրակի մարզի,ք. Գյումրի քաղաքի Ղորղանյան 91/1 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կումայրիի բաժնի պահպանման ծախսերի և սոցիալական փաթեթի գծով նախատեսված ծախսերի 2024 թվականի տարեկան նախահաշիվները, ներկայացրել հաստատման ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:
2. Ընդունել եմ ՀՈԳՎ Կումայրիի բաժնի աշխատողների հունվար , փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատրումների, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան կուտակիչ տեղեկագրեր և վճարման ցուցակներ:
3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային հայտ-պահանջագերը և “Mulberry” էլեկտրոնային համակարգով ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն :
4. Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգ եմ մուտքագրել 2024թ. տարեկան նախահաշիվները և ժամանակացույցերը:Ներկայացված հայտ- պահանջագրով ֆինանսավորումների հիման վրա հաշվից կատարել եմ աշխատավարձի,գործուղման, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխատուցումների,սոցիալական վճարի,եկամտային հարկի և այլ վճարների փոխանցումները:
5. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը,անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ,ծառայողական տեղափոխումների

արծակվելու դեպքում կազմել դրամանակ վարձակալության վկայականներ,կատարել վերջնահաշվարկ:

6. Հաշվարկել եմ ՀՀ ՆԳՆ ՈՀՈԳՎ Կումայրիի բաժնի ծառայողների/աշխատողների/ սոցփաթեթի ամենամսյա գումարները:
7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները,դրանք ստանալու համար դուրս գրել լիազորագրեր,վարել լիազորագրերի հաշվառման մատյանը, մասնակցել եմ 2024թվականի տարեկան գույքագրմանը և ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչություն եմ ներկայացրել գույքագրման արդյունքները ու դուրս գրման ակտերը :
8. Ներկայացնում եմ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվետվությանը ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
9. Իրականացրել եմ անմիջական ղեկավարի կողմից հանձնարարված աշխատանքներ:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հերմինե Անտոնյան

« 28 » դեկտեմբեր 2024թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ ______:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

« 30 » դեկտեմբեր 2024թիվ